

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարիոյ համար 12 Թր.
 Կուս 6 "
 Արսասանական համար սարեկան 15 "
 Վեցաւանայ 8 "

Աւերիկայի համար 3 սր.
 Տարեկան 10 "

Մանուկներու մոլոր սուս
 ջին երեւիլն համար 40 ս.
 Իսկ զիսկ երեսի հա-
 մար 20 ս. նրբի կ. երե-
 փեկ անկի անգամներու
 համար 20 0/0 գեղջ կը-
 շայ :

Հանձնայի համար ձևոք 40 սանթիւ

ՇԱՐՋՈՒ

R. P. Kalomarian, Mechtzariste
 (Autriche)
 W. 4.

Նախկին և նորա զրկեյ
 ներքազրուրեան հա-
 ցիկն :

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjourn“
 Varna (Bulgarie)

Արսասանական համար
 ձևոք
)(20 ՍԱՆԹԻԲ)
 Պաշխարիոյ համար
 ձևոք
)(15 ՍԱՆԹԻՄ)


Գրութիւնք և չիկ սրուիր

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂՈՒԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ. ՇԱՐՋՈՒԹԻ ԶՈՐԹԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՕՐԵՐԸ

«ՇԱՐՋՈՒԹԻ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՆԱՀԱՏԱԿԸ



Երրոյս Մասիսի ստորոտի ի վար,
 Դարերով սպրած կաղնիի մը սակ,
 Հագե խաչաքարով պղպուտն զրակ,
 Դարս խոտերուն մեղեկն զովարար :

Եւ հոն նովանոս այդ ուսերուն սակ,
 Մանուկս փարիկ, հողիկն ներքե պայ,
 Եւսունց մոտցում կը հանգչի խաղաղ,
 Կուրի մեղ մեծում մի հայ Գահասակ :

Տարիներ անցան չունեցաւ անի,
 Իր փարի զիսկն մեկը աղօթող,
 Եւ շիրմիկն վառ, որ չունի կորող,
 Վարդենի մը լոկ բուսաւ զեղանի :

Կը ծաղիկ վարդը միակզամ սարձն,
 Կը ծրիւկ իր կոյս բաժնիկն խոնկու բոյր,
 Եւ ինք իր վրայ ծով լոկ համբոյր,
 Կուսայ այդ կուպիս, սեւացած փարիկն :

Պարզ զեղջուկ մըն էր, հոյիս մըն էր ան,
 Անձանօր իրեն խոտերուն, խնդոյ,
 Մարերը ման գալ՝ միակ իր հաւանոյ,
 Իրեն մընարիս գաւազը չեւան :

Բայց եւր որ յանկարծ փոխեաւ անօրէն,
 Բշեցիկն սարիկ իր հոս ու անիսր,
 Սիրուն սեակը դարձանցիկն մոխիր,
 Զինուիչ ու կոռիչ ուխտեց ան օրէն :

Հրացան ուսիկ շրջեցաւ Լոկար,
 Հայրենի չեւան, այդ սրխուր եղեմ,
 Պաշտպանեցով միջոց քուստոնի զիւ,
 Հիք հայ զեղջուկն անգեկն ու սրկար :

Միևնէ որ օր մը իր զիւղը սարիկ
 Դառնալիկն մահուան սեւ գոյժը, աւաղ,
 Եւ այժմ մեկնիկ կը նիրհե խաղաղ
 Լըրում անեկեկն : Համբոյր իր փարիկն :

Վ Է Տ Ա

ՍԵՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԸ



Սեր աղագային ներկայ տագնա-
 պալի վիճակին մէջ թէեւ սեւ լի
 անմիջական դարձաններ կան
 խորհուրդիք, սակայն դատարա-
 րակութիւնն ալ, որ վաղուան սե-
 րունքը պիտի կերտէ, չպիտի
 դադրի երբէք իր ուրոյն տեղը
 զբաւելէ մեր հանրային գործու-
 նեութեան մէջ :

Եւ հարկ է որ հայրենիքի վե-
 րածնութեան գործին նուիրուած
 մեր մասուլէն երբեմն սիւնակներ
 յատկացունին կրթական այն կա-
 րեւոր խնդրին, որ ապագան
 պիտի երաշխաւորէ զիտակից և
 պարտաճանաչ հայեր պատրաս-
 տելով :

Մենք Պաղկարիս գտնուող հա-
 յերս՝ գիտենք թէ մեր կրթա-
 կան գործին մէջ որքան մեծ դեր
 ունին կառարելիք մեր հոգա-

բարձունքը : Ճշմարիտ է որ մեր
 փոքրիկ հայերուն նպատակա-
 յարմար կրթութիւն մը տրուելու
 ամբողջովն կոխում գրեթէ իրենց
 պաշտօնին բոլոր լուծութեան
 գիտակից և իսկապէս կրթու-
 սուցիչներէն, սակայն իրենց
 սուցիչները կը նորոգին իրենց
 բարձունքէն և չէ՞ որ մեր վար-
 ժարաններուն նիւթական բարեօր-
 մա տակադարութիւնը կախում ու-
 նի այդ հոգարարձունքներուն գոր-
 ծունէութենէն :

Ան այժմ Պաղկարիոյ և ո՛չ մէկ
 քաղաքին հայ վարժարանը կըր-
 նայ պարծիլ թէ ապահովուած է
 նիւթակէս : և ո՛չ մէկ անգ զու-
 յութիւն ունին հաստատ կալուած-
 ներ, որոնց մշտական եկամուտ-
 ներով կարելի ըլլար կանոնաու-
 րապէս վճարել պաշտօնեանե-
 րուն թոշակները՝ ազատ ժամա-
 նակ ունենալու համար խորհելու
 միմիայն դպրոցին բարոյական
 հսկողութեանը մասին : Հոգա-
 բարձունքն են որ իրենց հոգա-
 ծութեանը յանձնուած վարժարա-
 նին պէտքերուն բաւելու չափ
 գումարներ ձեռք անցընելու հա-
 մար նոր նոր միջոցներ պիտի
 հնարեն, ստեղծեն :

Կը հետեւի ուրեմն թէ մեր մէջ
 Կպրոցի մը հոգաբարձութիւնը
 ստանձնելը՝ շատ դժուարին և
 միանգամայն շատ փափուկ պաշ-
 տօն մը ստանձնել լսել է :

Մենք այժմ չպիտի զբաղինք
 այն հարցով թէ արդեօք ունի՞նք
 այնպիսի հոգաբարձութիւն, որ
 ըմբռնեն իրենց պատասխանա-
 ութութեան բոլոր ծանրութիւնը և
 լիովին արդարացին հասարա-
 կութեան քուէն :

Մենք կուզենք հոս մասնանիշ
 ընել կէտ մը միայն, որ ինչպէս
 մեր գրեթէ բոլոր հանրային
 անվճար պաշտօնեաներու նոյն-
 պէս եւ հոգաբարձութեան կեան-
 քին մէկ տղեղ կողմն է :

Սովորաբար մեծ ոգեւորութիւ-
 նով նոյն իսկ կրթութեան ընտ-
 րուած հոգաբարձու մը ուրախու-
 թեամբ կընդունի իր պատուարեր
 պաշտօնը թէեւ երբեմն դժկա-

մակութեան շինծու ձեւերով :
 Բայց և այնպէս շատ չանցնիր,
 մէկ քանի ամիս միայն, և ահա
 արդէն յոգնած է ան, անձնական
 բաղումներով բեռնաւորուած է,
 ամանակ չունի ժողովներու ներ-
 կայ գտնուելու—թէեւ ասոր հա-
 մար բաւական էր շարժել մէկ
 երկու անգամ միայն զիշերները
 երկու երեք ժամ զոհել :— այնինչ
 աղայէն նախատինք կրած է հան-
 դանակութեան մը առթիւ : Ժո-
 ղովուրդը դրամ չէ տար, վար-
 ժապետները ամանական կուզեն և
 ուրիշ հազար մէկ այս տեսակ
 պատճառաբանութիւններով չու-
 շանար իր հրատարականք մատու-
 ցանելու :

Տեղական օրէնքով հոգաբար-
 ձութիւն մը կը բաղկանայ հինգ
 անդամներէ և իր պաշտօնավա-
 րութեան պայմանաժամն է երեք
 տարի : Բայց բոլոր Պաղկարիոյ
 մէջ եթէ ոչ անկարելի, գոնե
 դժուար է գտնել հոգաբարձու-
 թիւն մը, որ իր պաշտօնին մէջ
 յարատեւած ըլլայ ամբողջ երեք
 տարի՝ իր հինգ անդամներովը :

Եւ գիտէ՞ք թէ ինչե՞ք կը քա-
 շին մեր ուսուցիչները, ինչքան
 կը տուեն մեր փոքրիկները այս
 անժամանակ հրատարականքներուն
 երեսէն :

Ազգային վարժարանի մը շա-
 հերը, վաղուան սերունդին ա-
 պագան իր անձնական հանգս-
 տութեան զոհ տուող այս տեսակ
 հոգաբարձու մը աւելի ազգօ-
 գրտ գործ մը կատարած չէ՞ր ըլ-
 լար եթէ փոխանակ ընտրուելէ
 մէկ երկու ամիս վերջը հրաժա-
 րելու, դեռ չընտրուած հրաժա-
 րելու ընտրելութենէ : որպէսզի
 ժողովուրդն ալ գիտնար իր ընե-
 նելիքը, գործելու աւելի տրա-
 մադի ուրիշ մէկու մը վստահէր
 իր քուէն :

Մարդ մը, որ անգամ մը ժո-
 ղովուրդին վստահութիւնովն ընտ-
 րուած և ինքն ալ հաւանութիւն
 տուած է, ա՛լ իրաւունք չունի
 օնէ պատրուակի ներքեւ իր
 վրայէն նետելու այդ ծանր բայց
 քաղցր պաշտօնը : Անկա պար-

տաւոր է քաջութեամբ կուրծք տալ բոլոր այն գեղարուածիւններուն, որ իր գէժմը պիտի ելլեն: Պարտաւոր է, այո՛, յարատեւել անվերհատ իր պաշտօնի պայմանաժամին մինչեւ վերջին րոպէն՝ ստանձնած գործին խղճմտօրէն օգտակար ըլլալու վճռական որոշումով, և միայն այդ պարագային է որ պիտի կրնայ ունենալ իր քարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութիւնը՝ սրտի և խղճի: Ան առեն միայն պիտի կրնայ արգարացնել ժողովրդին բռնէն, արժանանայ անոր վստահութեան և լիովին վայելէ անոր համակրանքն ու երախտագիտութիւնը:

ՏԻՊՐԱՆ ԱՃԷՄԵՆ

ՃԵՄԱՐԻՏ

ԿԵՂԾ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Կրթութիւն, զարգացում: Ահա այս է ներկայ ժամանակիս յատկանշանքը թէ՛ հանրային և թէ՛ անհատական կեանքի մէջ: Ազգեր իրենց ուժի և գործիքան իրաւունքներն իրենց զարգացման վրայ կը հաստատեն: Այսպէս ֆրանսացիք իբր է՛ն քաղաքակրթութեամբ ազգը կը պահանջէին ամբողջ աշխարհին սիրանալ: Այսպէս Գերմանացիք իրենց յաղթանակներն ուղի միայն առաջնորդներու պէտքերէն հասարակ մարդու զարգացման կը վերադարձին: Թէ՛ գոյգ մը ինչ մէծ արժէք կը նմայէ իր առաջնորդներու զարգացման, ասոր ապացոյցը սա է թէ՛ ան իր պահանջներն օր ընտ օրէ կ'աւելցնէ: Նաեւ անհատական կեանքի մէջ անուս մարդոց վրայ ցնայով, այո՛ նոյն իսկ արհամարհանքով կը նայուի և ամէն տեղ, նոյն իսկ աննշան վայրերու մէջ մեծ մասամբ հոյակապ կրթական հաստատութիւններ բանալու ջանքեր կ'ըլլան և ասոնք կը լեցուն շուտով, առանց նախկին հաստատութիւնները պարօրեւելու: Այսպէս ամէն ինչ յախուռն կրթութեան կը դիմէ կամ կը ստիպուի կրթութեան դիմել և անարարկոյս աս զողափարը մեծաւ մասամբ կը տիրէ թէ՛ կրթութեանէ կախալ է մարդկութեան յառաջընթացութիւնը:

ԲԱՆՎՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Բ. ԳԼՈՒԽ Գ.

Սահնակը կանգ տաւ մի քառական շքեղ հիւրանոցի դիմացը. մեր սիրահարները սահնակից դուս եկան. Ծաղիկեանը վճարեց կուսպանին և Հեղինէի թեւը առնելով ներս մտաւ հիւրանոցի ընդհանուր ճաշարանը. ծաղարանի շքեղութիւնը, ճաշոգնեքի ազգային բազմութիւնը զօրեղանքէս արդեցին Հեղինէի վրա. ներս մտնելուն պէս բազմութիւն աչքեր ուղղվեցին դէպի նրա կողմը և նա սկսեալ քօղը երեսին քաշեց, ու իրեն

դէպի շաւղի, դէպի կատարելութիւն:

Բայց բոլորովին տարբեր ձայներ չեն պահար, որոնցմէ միայն Ռուսոն կուզեմ յիշել, որ շլացուցիչ ճարտասանութեամբ մը կը քարոզէր թէ աշխարհի բոլոր ցաւի և դաւի, վիշտի և չարիքի պատճառը գիտութիւններն և քաղաքակրթութիւններն և թէ մարդ պարտի վերստին իր նախնական բուն վիճակին և անմեղութեան վերադառնալ, երջանիկ և ազատ ապրելու համար: Այս մեզ թերեւս բանազուրկութիւն, սակայն և այնպէս չենք կրնար զայս բացէ իրաց ժխտել: Որովհետեւ ո՞վ պիտի համարձակէր հաստատ կերպով առաջադրել իր, հակառակ բոլոր արուեստից բարձր սլացքին և անթիւ գիտելու, որք կեանքը զերեցկացնելու և ազնուացնելու են, զէթ զիտուորաբար մեղաց և ոճիրներու նուազում տեղի կուեննայ:

Կամ ո՞վ չհարկադրուի պարզ, անուս մարդն, որ սակայն իր գործունէութեան շրջանին մէջ առողջ է և հաւատարմօրէն կաշխատի և իրեններուն համար գործվագութիւն կերպով հոգանու է շատ մը զարգացեալ կոշտուող անձերէ վեր դասել:

Սակայն և այնպէս հակասութիւնը դիւրաւ կը լուծուի: Որովհետեւ կայ բնական և կայ արուեստական կրթութիւն մը, և իւրաքանչիւրին իրեն վայել պատիւը ստուլու ենք: քաց աստի կայ նաեւ ճշմարիտ և կեղծ կրթութիւն մը. ասոնք իրարու հետ չի շփուենք:

Յիշարեւ հաճոյ կը թուի մեզ հըզօր, բարձրը օղին մէջ ցնուող անտառի երկինքը, որուն համար ոչ մէկ անտառագետ մասնաւորապէս իննամբ տարած է. սակայն ասոր համար միթէ պիտի արհամարհենք անուշ պլուտոնները մրգեմիտին, որ մի միայն պարտիզպանի խնամքով այնչափ առողջ բուսած, աճած է, և ազնիւ հոտերով պատուատուած՝ այսպիսի ծաղիկներ ու պտուղներ կ'արտադրէ: Ահա այսպէս կան նաեւ բնականէն աճող և զարգացող մարդիկ, որք նըպաստաւոր հանգամանքներու ներքեւ սքանչելի կերպով կարծես ինքնիմէն կ'աճին, մինչդեռ ուրիշներ երկար և ծանր աշխատութեան և դաստիարակութեան կը կարօտին, երջանիկ կերպով կ'ազմակերպուելու համար: Լաւ, միթէ ասոնց վրայ ալ ուրախանալու չն'ընք: Եթէ զգուշանանք բնաձիր մարդոց կրթութիւնը արհամարհել, և ընդհակառակը եթէ զայն

աւելի գերադասենք, երբ նա պարզ անկեղծ բարոյակառուութեամբ մը ի յայտ կուգայ, այնպէս ա: պէտք չէ որ արուեստի շնորհիւ տաժանելի կերպով ձեռք բերուած կրթութիւնը նախասենք. այլ պարտինք խոստովանիլ որ, միայն ճշմարիտ, լաւ և գեղեցիկ իտէալին առաջնորդելով է որ, մարդկութիւնն էսպիկտէ հոթեան աւելի բարձր աստիճան մը կը մագլցի: Բնական է որ արուեստի շատ մը աշխատանքներ կը ձախողին, բայց ոչ նուազ բնութեան արտադրութիւններ կը չորնան և կ'օսնին: Եւ ինչ որ արուեստական կրթութեան արհամարհում կը զարնեն, այդ կեղծ կրթութեան մասին կրնայ բուռել: Վերջինս չարեայ պատճառ կը ըլլայ, որոնց պատառիտանտու կը հոչակուին, ճշմարիտ կրթութիւնը կարեւոր է ուրիմն այս երկուքն իրարմէ զանազանել, եթէ մեք մեզ և ուրիշներուն ճշմարիտ կրթութիւնն սեփականացնել կուզենք:

Այժմ պիտի խօսիմ այս զանազանութեան վրայով. նախ արտաքին և ներքին կրթութեան հակասութեան և յետոյ ներքին կրթութեան մասին, որ է մօքի, կամքի և ճաշակի զարգացումը:

Միայն արտաքինը կը տեսնուի և մեր զգայարաններուն ներքեւ կ'իյնայ և ազդէ կը հետեւ ցնենք անտեսանելի ներքինը, կարծելով որ՝ արտաքին տեսքին նաեւ միօրինակ գոյութիւն ու համապատասխանելու է, ինչու որ ներքին և արտաքին հակադարձներ չեն, որք զերբ վանեն, այլ միշտ միասին են և զիրար կ'ամբողջացնեն. Իւրաքանչիւրը կերպարանք մը կը լըստանայ. իւրաքանչիւրը ուժեղ գործողութեամբ, արարքով մը կը յարստուի, նաեւ բարձր խորհուրդէ մը կը ծնի, խօսքը կամքէ մը: Եւ այսպէս կեդրակայնեցի իրաւամբ—միջինը որ թերեւս անհաճոյ փորձառութիւն մը մեր սխալի մասին ուրիշ համոզում մը գոյացնէ մեր մէջ—մարդու մը գեղեցիկ արտաքին կրթութիւնն է, նոյն իսկ իր կերպարանքէն, ուր միայն որ իր խօսքերէն ու գործերէն, այո, ասոնցմէ կեդրակայնեցի թէ՛ նա հոգեոյ և սրտի գեղեցիկ կրթութիւն մը ունի: Իսկպպէս կրթեալ ու զարգացեալ կը համարուի մեզ համար ամէն ոք, որ մեզ զուլթադէմ և բարեկամաբար կը դիմաւորէ, օտար առանձնայտակութիւններու և կամքիքներու հանդէպ զգուշութեամբ կը վարուի, փափկազգացումը կը խնայէ, ոչ սքի

հանդէպ վշտացնելով կամ նախատելով կը ներկայանայ, այլ որչափ որ կարելի է, լաւ դիտաւորութիւնը միշտ իր աչքին առաջն ունի և պարկեշտ նկատումով մը իր սեփական սխալներու և թերութեանց վրայ, կը ջանայ խրատել և բարեխաղ ուրիշներ, նաեւ ընկերութեանց, բարուց և սովորութեանց դէմ գործել չուզեր և նոյն իսկ ինքն տնկարեւոր քաղաքագարական ձեւերուն կը համակերպի: Ահա ասոնք են կրթութեան արտաքին նշանները: Եւ երանելի անոր, որուն քով այս ամէնը իր մաքուր, մարգարէի զգացումին արտայայտութիւնն են: Բայց այսպէս չէ միշտ: Մարդս բնորոշակէ նաեւ անբնականը կատարելու և ասիկա արտաքին երեւոյթը չի համապատասխաններ միշտ ներքին գոյութեան: Յաճախ կեղծիք մըն է ան, սնցոյր մը, որ առողջութեան գրչոյն կը նենդէ: Կամ միթէ յաճախ մարդ մը հաճախի վարմունքը վախէ մը չի՞ ծնի, թէ մարդիկ եթէ ոչ զինք ազատ նկարագրի տէր մէկը կը կարծեն, կամ վաւ երկչոտութենէ մը, իրատուքի և ճշմարտութեան հետ մար աշխարհ միջամտելու, կամ սովորեցուցուած և վարժեցուցուած սովորութիւն մը, որ բոլորովին սին գոյութիւն մը կը պարտակէ: Այսպէս որեմն արտաքին կրթութիւնն անանց բարոյական հիման որչափ յաջողակ կերպով ալ խաբել գիտնայ, կը խաբէ միշտ և կեղծ է: Եւ եթէ այս կեղծ կրթութիւնն բնագրական անտեսանելի աննշան չեւեւանք է, որեմն Ռուսոյ անպատճառ իրաւունքը տալու ենք, ինչու որ հիտուութիւնները խօսելու և գործելու ճարտարութիւնը կ'աւելցնեն և այս երկուքն այ, խօսելու և գործելու, կեղծաւորութեան լաւ գէնքեր կրնան ըլլալ, և միթէ իր ժամանակին ազդեցիկ մարդու մը բերնին սա սրամիտ խօսքը սահած չէ՞ թէ մարդս լեզուն հնարած է, իր մտածումները ծածկելու համար: Արդարեւ չատերն ալ կը խօսին, իրենց մտածումներն կամ նաեւ իրենց անմտութիւնը ծածկելու համար, իրենց խօսքերն սրղեւ չի բլբլիք և շառլախանութիւն իրեն, եւ բաւական գէշ է արդեւ, երբ շաղախանութիւնը օրակէս կեանքի և յարաբերութեանց մէջ կը տարածուի: Բայց որչափ աւելի գէշ, եթէ շառլախանութիւնը տէրու թեանց և ընկերութեանց գործերու մէջ թափանցէ կամ այն վայրերու մէջ իսկ, ուրկէ երիտասարդութեան և ազգին կրթութիւնը կը բղբի, եթէ նա գահի և բեմի վրայ տիրէ:

Միխակ, Երեցեան

(Իրմ. թարգմանում)

բոլորովին օտար զգալով այդ միջավայրին, կամացուկ ասեց.

—Մենք է՞լ այստեղ պէտք է ճանչենք, Ծաղիկեան:

—Ոչ, մենք առանձին սենեակ կերթանք, պատասխանեց Ծաղիկեանը և շարունակեց սրահի միջով գնալ:

Սեղաններից մէկին շուրջը նստել էին չորս հայ ուսանողներ, երկու օտարուհիներ ընկերակցութեամբ, որոնք շատ շքեղ էին հագնված և կրակածելի գեղեցիկութիւն ու թարմութիւն ունէին:

—Տեսնում ես, Ծաղիկեան, դրանք հայ ուսանողներ են, հարուստ մարդկանց զաւակներ, կարծես մէկն էլ ձեր ծանօթն է, նա որի հետ անցեալ օր ինձ ծանօթացրիք, թատրոնից դուրս եկած միջոցին, դրանց մասին սենեակում կը խօսենք, նախ դուրս գանք այս միջոցառումից:

Խօսքը վերջացնելով Ծաղիկեանը ծառաներից մէկին պատերից իրենց առաջնորդել առանձին սենեակ:

Սենեակը շատ կոնիկ էր, ճաշակով և համեստօրէն զարդարված: Պատերը զարդարված էին նշանաւոր Ռուսներէ մեծարկր պատկերներով, Այլապովսիու ծովանկարներից մէկի պատճէնն էլ զարդարում էր դրան զիմացի պատը: Մէջ տեղը դրված էր գեղեցիկ ծածկոցով մի կարու սեղան, շրջապատված զիւսնով և բարկաթոռներով:

—Ինչ սիրուն սենեակ է, բայցաւանչեղ Հեղինէն, կարծես բնակարանի սենեակ լինի, ոչ հիւրանոցի տես, տես, Ծաղիկեան, լուսամուտների զոգերում ծաղկամաններ էլ կան, Լաւ սենեակ ընտրեցին, մի երկու ծամ կը նստանք, կը ճաշենք, կը խօսենք, զէ. ընթրիք պատերիք:

միայն առանց խմիչքի:

—Իհարկէ, խմիչքի պէտք չկայ, միայն չիլ մը դարեւուր կը խմենք, եթէ համաձայն ես:

—Պարեմը կարելի է: Դէ, ես տեղաւորվում եմ:

Հեղինէն զլրարկը և վերադառն հանեց ու տեղաւորվեց զբաւանի վրայ: Ծաղիկեանը ելքարական գանգը հընչեցնելով ծառային կ'ուշից և ընթրիքը պատերեւոյ յետոյ նստեց Հեղինէի գիծացը:

—Դէ, հիտա խօսիր, Հեղինէ, հիտա աւելի խաղաղ արամազրութեան մէջ ես գտնվում. հիտա իտքերն կ'աւելի լաւ կը մորենես:

—Ձէ, նախ դու այն նստած ուււանողների մասին պատմիր, ովքեր էին այն կիւնիքը, նրանք հայո՞ճի ներ չէին, եւ ոչ ուսանողներէն:

—Այն կիւնիքը, Հեղինէ, անգործ

ՀԱՅՈՒՆԿԵԾԻՈՒ

ՖԻԼԻՊԷԻ ԱՂԻԱՍՏԻԱՆ ԱՄ ՄԱՍՆԱԽՈՒ ՄԲԻՆ

Սկսած 1901 նոյեմբեր 25 էն մինչև 1902 սեպտ. 15

ՄՈՒՏՔ

Լէվ Սնթ.

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Նախորդ հաշիւէն պատ- 50', 'Շատթիւական դանձանակէն 725.24', 'Ստորագրութիւն 231.80', 'Ստորագրութիւն 75.—', 'Չատիկահան հանգանա- 260.—', 'Չատիկահան շրջագոյ- 26.41/2', 'Ստորագրութիւն 8.—', 'Ստորագրութիւն 173.47', 'Փանձայակէն 6.67, 1540.11'.

Ե Լ Ք

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Աղքատ ընտանիքներու 4911.8.1/2', 'Աղքատ ընտանիքներու 164.871/2', 'Պանդուխտներու ճամբու 272.50', 'Մանկան և Չատիկի առ- 496.—', 'Ստորագրութիւն 8.60', 'Փայտի և փոխադրողի 16.35', 'Նամակադրոյմի և կ'ըքամովի —95', 'Ինքնու համար 41.301/2', 'Հիւանդանոցին վճարուած 34.—', 'Փանձայակէն պատգանդին 154.65 1/2', 'Աղքատ տղու մը կոշիկ 2.—', 'Փայտի վճարուած 30.—'.

կենդանի չէին. քոթոններ էին. զրանք մեր հարուստ ուսանողների տունը քանդողներից էին. Մեր հարուստ ուսանողների մեծ մասը իր ուսանողական օրերը այդ կանանց հետ եւ թղթախաղի ու արքեպիթիան մէջ են անցկացնում. —Վայ անպիտաններ, ուրեմն մեր քաղաքային էլ այդպիսի կեանք է վարում. դու չգիտես, մերոնք ուղղում են ինձ այդ անպիտանի հետ ամուսնացնելու, ձեռք է կանգնեցրել մաշում են այդ անբարոյական կանանց հետ, և յետոյ գալիս մեր խնդ օրիորդները, աւելի ճիշդը նըրանց օժիտների ետեւից ընկնում. թէ տեսնե՞իր թէ իմ հայրենակից պարոնը ինչ աչքերով էր նայում ինձ մի քան ասպակ կը հասցնէր. քոթոնները մէջ դաստիարակվողը ինչ կարող է լինել, Բայց ես նրան հաս-

Ս. Մ. Պ. Աստարծեանի 97. Ա. Կ. Միսակ ընտանի 30, վճարուած 127.— 1540.11

Աղք. Մասնախումբը սոյն հաշուեկշիռը ներկայացնելէ ետք պէտք կը զգայ իմացնել Ֆիլիպէի հայ հասարակութեան հետեւեալը. Նկատելով որ, Ֆիլիպէի Աղքատախումբը հաստատուելուէ մը շուրջի և միշտ պարտքի տակ կը մնայ, միւս կողմէ շարաթական գանձանակի դրուածներն ալ իր անպատեհութիւնները ունի, որուն մասին միշտ դիտողութիւններ կըլինան, Աղք. Մասնախումբը որչա՞մ է ԲԱՄՆԵՆԻՆԻԻ դրուածները հաստատել նոյեմբերէն սկսած: Աս գործը զուլի հանելու համար յատուկ յանձնարարութիւն մը պիտի չըջի հասարակութեան մէջ. Ի դիմաց Աղք. Մասնախումբի Ատենապետ Ատենապետ Բ. Զօրեան Ս. Մ. Պ. Աստարծեան (Կ.Մ.Ք) Ֆիլիպէ 1902 հոկտ. 10

ՀԱՅՈՒՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Երբ Օրմանեան պատրիարքը ետ առաւ իր հրամարակները և Սուլթանին սահակալութեան օրը՝ օգոստոս 19ին հաւանեցաւ ազգութենէր զընդհանր Սուլթանին թանկագին կեանքին համար, բերանացի կերպով խօսք առած էր թէ Թուրքիոյ հայոց վիճակը պիտի բախտաբերէր և պաշտօնական յայտարարութիւններ՝ մասնաւորապէս զերման թերթերու մէջ հրատարակուած՝ ծանուցին շխարհի թէ հայկական խնդիրը լուծուած էր և թէ վեհապետը կը հաճէր ներքի այն ազգին որմէ երեք հարիւր հազար հոգի խողխոյզը տուած էր. Հոս կարգացուցաւ թէ իսկապէս կայսերական ինչ անուշաճամուծեամբ մը Ապարիլ Համիտ իր խոստումը կատարելու թերացաւ. Համաձայնութեան կարելո՞ր կէտերէն մէկն էր կովկասի գաղ-

կացրի իմ ինչ պտուղ լինելը. առամիտքս յայց տուի. —Թող Հեղինէ. դանց մասին խօսել չայլմէ, զրանք ստեղծված են իրենց հայրերի ծուռ ճամբաներով ձեռք բերած հարստութիւնը ուտելով: Երբ մուր բերածը քամին կը տանի ասուած է ժողովրդական ասուածը. Աւելի լաւ է խօսենք մեր մասին. —Մեր մասին ինչ խօսենք, Մաղիկեան. մենք իրար սիրում ենք. ես ասանց քեզ սպրիւլ չեմ կարող. Դու քեզ ներքի ևս հայ ժողովրդի ազատագրութեան գործին. ես զրա դէմ ոչինչ չունեմ, ընդհակառակը կարողացածին չափով կաշխատեմ քեզ օգտակար լինելու: Բայց մեզքս ինչ թաղցնեմ, հետք գուլ չեմ կարող. երկիր մանկու. ընդունակ չեմ, ինձ այնպիսի մի դատարարութիւն է արված, որ ես անկարող եմ լինու-

թականներուն վերադարձը իրենց տուները. բայց Սուլթանին համար կովկասի 40,000 գաղթականները գոյութիւն չունէին. թէ և տնոնք շարունակած ըլլային վճարել օտմ. հարկերը և մերժած ըլլային ոռոս դառնալ, թոյլ չի տար տնոնք որ սահմանազուխը անցնին: Գեռ չենք գիտեր թէ ինչ պիտի ըլլայ արդիւնքը այն խնդրագրին զոր անոնք ուղղեցին Ֆրանսական ու անգլիական կառավարութեանց: Բայց քերթ Արմէնիայի խմբագրութեան ուղղուած հեռագիր մը անոնց կացութիւնը յուսահատ ցոյց կուտայ: Օտմ. իշխանութիւնները գէշ պիտի թուտար կը քշեն զանոնք կամ անոնց կ'առաջարկեն իրաւամտալ, այս պայմանով միայն անոնք պիտի կրնան իրենց տեղերը դառնալ: Որովհետեւ Թուրքիոյ մէջ թեմերու արձանատուներուն վրայ ցուցադրութիւնը քաղաքային հանգամանք կը ներկայացնէ զեռ. դաղթականները՝ իրամ կրօնը ընդունելով՝ պիտի կորսնցունէին իրենց հայու հանգամանքը: Անոնք կը թախտին սահմանազուխի վրայ, խոսքս երկրի մը մէջ, ուր ձիւնն սկսած է տեղալ առատօրէն՝ ծածկելով լեռան կածանները, խախտելով կիրճերը. եւ թէ անոնք անթուրեմէն չմեռնին՝ ցուրտէ պիտի մեռնին: Գալով Թուրքիոյ անդորրութեան, պաշտօնական ազգիւրէ երկու տեղեկագրեր նմանապէս «Իրօ Առմէնիայի» ընդունուած՝ ցոյց կուտան թէ ինչ պէտք է հասկնալ այդ անդորրութիւն բարեօրով երբ զանկալ արտասանողը Ապարիլ Համիտն է: Այս տեղեկագրիները յոյժ սահմանափակ գումարներով վրայ կը խօսին: Ախլաթի, Վանայ լիճին հիւսիսային եղբորը. Պուլանքի և Մալազկերտի՝ Մուշի հիւսիսային, Բուլաղի ու Քանի մը ամիսներէ ի վեր Ֆրանսական, անգլիական և ռուսական հիւպատոսական

նալ երկրի պայմաններին. Այդ անկարողութիւնը այնքան ինձ չը պէտք է վնասի, որչափ քու գործունէութեան. որովհետեւ հետք եկած միջոցին ևս քեզ վրայ միայն բեռ կը լինեմ, կը կաշկանդեմ քեզ Բայց մի՞ թէ իմ այդպէս լինելու պատճառով ես պէտք է անդադար գրկվեմ քու սիրուց. ես սիրում եմ, եւ սիրված եմ քեզից: Ինչո՞ւ զրկվեմ բնութեան պարզեւած ամենամեծ զգացումից: —Բայց իմ սիրուց չես զրկվում, Հեղինէ: Ես դարձեալ սիրում եմ քեզ միայն ստաջարկում եմ ամուսնութիւնը յետագիւր: —Ամուսնութիւնը յետագիւր, Ինչո՞ւ յետագիւր: —Յետագիւր, որովհետեւ իմ կարծիքով ամուսնանալ եւ միմեանցից միշտ անջատ ապրելը աննպատակ է:

գործակալներ կը կենան Մուշ և անկարելի է որ հետեւեալ դէպքերը հազորդուած չըլլան այն կառավարութեանց սրտնք զիսնալ ուղեցին զանոնք: Տեղեկագրերուն մէջ յիշատակուած քիւրդ պիտեքը արիւնոտ համբաւ մը կը վայելն աւմէնքն ալ, մասնաւորապէս ձիւրքան լինելէն Սախ և Հասանալիներէն Ռիլա: Համիտի չորս զօրագունտ կազմուած են ձիւրքան լինելէն Վարդօ դաւառակին մէջ և հիմք զօրագունդ Հասանալիներէն Մալազկերտի շուրջը: Աւասիկ վերլուծուած երկու տեղեկագրիներուն. Վան 22 սեպտ. Սեպտ. 12ին Թոմաս Մանուկեան՝ Բարթոլոմայի (Ախլաթի գեղերէն) իր տան մէջ կը պաշարուի քիւրդերուն կողմէ. սպասուորը Արշակ իմաց կուտայ մօրը. բայց ամէն աղաչանք անօգուտ կըլլայ. քիւրդերը կըսեն թէ հրամանի համեմատ կը գործեն և թէ պարտաւոր են մեռցունել հայերը: Թոմաս Մանուկեան բռնուցաւ և կտոր կտոր եղաւ. մօրը որովայնը ճեղքեցին, սպասուորին գուլիսն ու սուքերը կտրեցին. Յետոյ տունը աւարի տրուեցաւ: Ախլաթի իշխանութիւնները եղածն իմանալով ազատ թողուցած են Յերման քիւրտ պետը որ կաշմակերպած էր այդ կոտորածը և հայեր ձերբակալած են իրրու հեղինակ ոճրին: Տրապիզոն, 8 հոկտ. Պոստանքէնտ գիւղը (Պուլանքի գաւառակ) թատերաւայրն է ձիւրքան լի քիւրտ պէյի՝ Սախ Նատոզատէին շարագործութեանցը: Աղջիկներ առեւանգած ու մարդեր սպանած է: Հասանալի պետերը Սիւլէյման և Բիլա, երկուքն ալ Մալազկերտի Համիտիէ զօրազուններուն սպանելէն, ցորեկ առին յարձակած են Սիւլէյկ հայ գիւղին վրայ. սպանած են հայ երեւելիներէն Կիկօ Մարտիրոսեան,

Եւ քանի որ մենք միտ անջատ պէտք է սպրեմք, աւելի լաւ է մեզ լուրջութիւն չը կաշկանդենք. Մեթաղրենք որ վաղը մենք ամուսնացանք, եւ միւս օրը ես պարտաւորվաք եղայ զորով վայրը դնալ, ու յանկարծ մի փորձանք պատահեց ինձ հետ, այն մասնակ ինչ կը լինի քո վիճակը: —Երբ, ինչ որ շամուսնացած գրութեան մէջ, եթէ ամուսնացած վիճակում քեզ հետ փորձանք պատահած միջոցին դժբախտ պէտք է լինեմ, նոյնքան դժբախտ պէտք է լինեմ ևս հարսնացուց եղած միջոցին: Մեր ամուսնութիւնը յետագիւր անխղճութիւն է, սիրելի Մաղիկեան: Ես քեզ յայտարարում եմ, ինձ համար կամ դու, կամ ոչ ոք. ել ծնողքս ինձ խանգարել չեն կարող. ես վաղը պատրաստ եմ քեզ հետ եկիզցի դնալ. Եկ, շուտով այս խնդիրը վերջաց-

պատկարը և ուրիշ երևելի մը, երկու հարիւր արջառ և ինչ որ ձեռնընուն հանդիպեր է առած տարած են: Սիւլէյման և Րիզա յարձակած են նաեւ Արկոն գեղին վրայ և 90 հատ կով ել և այլն տարած են, և յետոյ բնակիչներէն մէկ օամ: ոսկի փրկանք ուզած են անատուն գլուխ: Ստակը առնելէ ետք՝ կենդանիները չեն վերադարձուցած: Գեղացիները Պուլանքի գայմաքամին բողբոջած ըլլալով, երկու աւազակները նորէն կողոպուտի սկսած են:

Համրտիէ քիւրտերը թալլած են Զրհոր և Խմելուր գեղերը: Էրզրումէն Մուշ գացող կարաւանին վրայ յարձակելով՝ կողոպուտած, ու երկու հոգի սպանած են:

Վերջապէս Խոյոյ և Իննաշէն դաւառակներու հայերը թողած են իրենց տունը տեղը՝ ալ չը կրնալով գիմանալ քիւրտերուն հարստահարութեանցը:

Եւ տեղեկագրին հնչինակը տխրորէն կ'աւելցունէ:

Խիղճն ու արժանապատուութիւնը երկու լաւ բաներ են մի միայն թուղթի վրայ: բայց գործնականին մէջ չես հանդպիր անոնց: Ո՞վ եւրոպա, թողուցէք ձեր անտարբերութիւնը: Յիշեցէք 1878ին Պերլին արուած խոստումը: Օգնութեան հասէք այս հէք արարածներուն որոնք ևս իրաւունք ունին լուսաւորութեան՝ ամէն մարդոց պէտք ուրքիոյ մէջ ալ հաստատեցէք մարդոց իրաւունքները:

(Հոտորեհն)

ԶԵԿՈՅՑ

Շարժումի տնօրէն-խմբագիր Պ. Վարդօ տեղէն մեկնած պահուն՝ թերթին առժամեայ խմբագրութիւնը ինձի յանձնեց: Հետեւապէս Շարժումի 455 թիւէն սկսեալ մինչեւ 460 թիւը իմ ստորագրութեամբս (Շաւարշ և Ն. Ս.) հրատարակուած բոլոր յօդուածներուն ջարտակազմ պատասխանատուութիւնը լի ինձի կը պատկանի: Շաւարշ

Նենք, Վաղը մօրս հետ վերջնապէս կը խօսեմ այդ մասին:

— Դժուարին գործ ես առաջարկում, Հեղինէ. եւ ես դժուարանում եմ այդ քայլը առնել, միայն քո ապագայի վրայ մտածելով: Ես վախենում եմ, որ այդ քայլը անելով ոչ քեզ երջանկացնող ամուսին կը լինեմ եւ ոչ էլ հայրենիքի ազատութեան կարապետ զինուոր:

— Երկուսն էլ կը լինես, հողիս Ծաղիկեան, այդ թոյլ մարդիկ չեն կարող լինել: տղամարդը նա է որ թէ իր սրտին է բաւականութիւն պատճառում, թէ իր պարտականութիւններէ մէջ չէ թերանում: Եւ ինչի մտածել որ միշտ անջատ պէտք է մնանք:

(Շարունակելի)

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Ֆիլիպէի Ծաքէ կանանց խմբից Պետտի հրատարակութիւնների համար ընդունեցի 113 լէվ 50 սանթիմ, իսկ Պետտի Բուլգարացի խմբից 164 լէվ:

ՎԱՐԴՕ

ԿԻՒԿԻՈՑ ՆՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Անցեալ շաբաթ օր Ատանայի մայր եկեղեցիին մէջ դումարուած կաթողիկոսական ընտրութեան ժողովը միաձայնութեամբ կաթողիկոս ընտրած է Երուսաղէմի լուսարարական Սահակ եպիսկոպոս Խաչայեանը:

Նորընտիր կաթողիկոսի մասին ահաւաստիկ կենսագրական մէկ բանի տեղեկութիւններ: Սահակ սրբազան ընկ խորհրդացի է: Իր աշխարհական անունն է Գարիէլ Կարապետեան: Գեւ 18 տարեկան պատանի երուսաղէմի կերթայ հօրը հետ 1865ին և կ'աշակերտի Փառանգաւորաց վարժարանին: 1869ին իբրեւ վարժարանին ամէնէն յաջողակ աշակերտը սարկաւազ ձեռնադրուելով երկու ընկերներու հետ (այժմեան Դեւունդ Վ. Մաքսուտեան և Վահան Վ. Յակոբեան) Պոլիս կուգան իրենց ուսումը կատարելագործելու, ուր կը մնան 3 տարի չափ և վերադառնալով միասին կը վարեն Փառ. վարժարանին ուսուցչութեան և միանգամայն տեսչութեան պաշտօնը մինչեւ 1881: Այս թուականին Գեր. Մամբէ վարդ.ին հետ (այժմ եպիսկ) կը զրկուի իբրեւ նուիրակ Ռուսաստան, ուր կողկատու նահանգը կ'որոշուի Մահակ վրդ.ի հովուական բաժին: Եւամբայ նուիրականութեան յետոյ միաբանական ընդհ. ժողովոյ որոշմամբ կը ընտրուի լուսարարական Ս. Աթոռոյ և հանգուցեալ Մակար կաթողիկոսէն եպիս. ձեռնադրուելով կը վեր գառնայ Երուսաղէմ և կըստանանէ իր պաշտօնը, զոր կը վարէ մինչեւ ցայսօր, շարունակելով այն պաշտօնին հետ նաեւ Փառանգաւորաց վարժարանի ուսուցչութեան և վերին հսկողութեան աշխատութիւնները, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյ վարչութեան անդամութիւնը: Իր բաղմազբաղ գործոց մէջ մասնաւոր հոգածութեամբ հետամուտ կը լլայ Ս. Աթոռոյ մատենագրարանին կարգադրութեան և բաղմաթիւ կրօնական ձեռագիր ներու ուսումնասիրութեամբ անոնց կանոնաւոր ցանկը պատրաստելու:

1892ին յանուն Ս. Երուսաղէմի պատուիրակ կը կարգուի Ս. Էլմիաճնի կաթողիկ. ընտրութեան, իսկ 1900—1901 երկրիցս պատուիրակ կարգուեցաւ Սոյ կաթողիկ. ընտրութեան:

Իր գրական աշխատութիւնները եղած են «Սիօն» ամսագրութիւն մէջ աշխատակցութիւն, ինչպէս նաեւ այլ և այլ գաւազիրքեր, որոնք են «Պատմ. հին կրթականութիւն», «Ինտիկան պատմա-աշխարհագրութեան», «Տիւրքերագրութիւն», «Գրած է նաեւ Ս. Երուսաղէմի ուստատեղեաց մէջ մեր արտողութեանց ձեռքերու և սովորութեանց ամփոփումը «Ինտիկանութիւն (եկեղեցական) իրաւանց» անուամբ:

1892ին յանուն Ս. Երուսաղէմի պատուիրակ կը կարգուի Ս. Էլմիաճնի կաթողիկ. ընտրութեան, իսկ 1900—1901 երկրիցս պատուիրակ կարգուեցաւ Սոյ կաթողիկ. ընտրութեան:

Զ Ո Ւ Թ Ե Ր Ի Ա

Հօլանէն կը հալոթողեն որ մօտերս իր տեսակի մէջ բոլորովին նոր սգահանդէս մը պիտի սարքուի Փրնէզի յիշատակ միջազգային իրաւունքներու ոտնակոխ ըլլալուն և ազգերու՝ ինչպէս Ֆինլանտիայի, Հայաստանի, Չինաստանի, Ֆիլիպեան կղզիներու և Թրանսպալի դէմ գործուած անիրաւութիւններու, որոնց շատ մեծ ուշադրութիւն չը դարձնելու եղբ հասարակաց կարծիքը:

Հասոյթը պիտի յանձնուի պօէր ղօրաւարներուն:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԸՋԴ

Ինչպէս արդէն գրուած է մեր թերթին ճակատը, բաժանորդ գրութիւնը միեւնոյն ժամանակ բաժնեկիւնը պարտաւոր է մեզ զրկել չափաւոր մեր այս կտորով որոշման, դեռ կը գտնուին մարդիկ որ թերթ կուզեն ու դրամը չեն զրկելու: Վերջնականապէս կը ծանուցանենք խօսք չը հակոցողներուն թէ մեր որոշումը յարգողներուն միայն թերթ պիտի զրկենք:

Գալով անոնց, որոնց ասկէց առջ իրենց պարտքերուն հատուցման համար մասնաւոր հրահրերը գրկեցինք, ու շատեր դեռ մեր հրահրին չպատասխանեցին հնչուն կերպով, կը ծանուցանենք որ փութեան իրենց պարտքը վճարելու, եթէ չեն ուզեր որ խմբագրութիւնս անհաճոյ միջոցներու դիմէ:

ԹԱՏՐՈՆ «ՍՍՆԴՐԱՆ»

Այս գիշեր Պապեան թատերախումբը մեծ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ սքանչելի ու սրտաշարժ տուամ մը «Ձեռնակներ» կամ «ԾՈՒՄԿԱՆԱՑ ԶԱՅՐԸ»:

Մէկ յառաջարան և չորս արարուած: Ասոր պիտի յաջորդէ թրքական կեանքէ շատ ծիծաղաշարժ զանազան մը:

Կը հրահրենք թատերասեր հասարակութիւնը ներկայ գրտնուի սոյն ներկայացման՝ թէ շարժական ու հոգեկան զօհացման համար և թէ իբրեւ քաջալեր հայ թատերախումբին:

Իսկ կիրակի գիշեր պիտի ներկայացուի ՌՈՊԵՐԹ ԱԽՍՊԱԿԱՆԻ 4 արար և 2 պատկեր, ծիծաղաշարժ զանազան մը:

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность», Вара